Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019թ. սեպտեմբերի 23-ին հաստատված «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

**Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի (ԱԴԵԿ)**

*Կանոնադրություն*

---

**Հոդված 1**

***Կոալիցիայի ստեղծումը***

1.1. Մենք՝ հիմնադիր անդամներս, ովքեր հաստատել են կանոնադրությունը, սույնով ստեղծում ենք աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիան (այսուհետ ՝ ԱԴԵԿ): ԱԴԵԿ-ն ազգային կառավարությունների, ՄԱԿ-ի գործակալությունների եւ ծրագրերի, բազմակողմ զարգացման բանկերի եւ ֆինանսական մեխանիզմների, մասնավոր ոլորտի, գիտական եւ կրթական հաստատությունների համաշխարհային գործընկերություն է, որի նպատակն է բարձրացնել ենթակառուցվածքային համակարգերի դիմակայունությունը կլիմայի եւ աղետների ռիսկերի նկատմամբ ՝ դրանով իսկ ապահովելով կայուն զարգացում:

1.2. ԱԴԵԿ-ի քարտուղարությունը գտնվում է Հնդկաստանում՝ Նյու Դելիում:

**Հոդված 2**

***Անդամակցությունը***

2.1. Երկրները եւ մյուս շահագրգիռ կողմերը, որոնք հաստատել են սույն կանոնադրությունը, ԱԴԵԿ-ի հիմնադիր անդամներ են:

2.2. Հավանական անդամները հայտնում են իրենց կողմից Կանոնադրությունը հաստատելու մտադրության մասին եւ ԱԴԵԿ-ի ղեկավարների խորհրդի համանախագահներին են ներկայացնում ԱԴԵԿ-ի անդամ դառնալու

հայտը: Համանախագահները հավանական անդամների հայտը ներկայացնում են ղեկավարների խորհուրդ եւ նպաստում նոր անդամակցության մասին որոշման ընդունմանը:

## Հոդված 3

***Կոալիցիայի փեսալականը, առաքելությունը եւ ուղղորդիչ սկզբունքները***

3.1. ԱԴԵԿ-ը ձգտում է արագորեն ընդլայնել դիմակայուն ենթակառուցվածքի զարգացումը եւ արդիականացումը՝ հիմնական ծառայությունների համընդհանուր հասանելիության ընդլայնման, բարեկեցության եւ արժանապատիվ աշխատանքի ապահովմանն ուղղված կայուն զարգացման նպատակների հրամայականներին համապատասխանելու համար: Սա անհրաժեշտ է իրականացնել կլիմայի փոփոխության դեմ պայքարի եւ աղետների ռիսկի նվազեցման արագացված եւ ընդլայնված միջոցառումների հետ միաժամանակ՝ տեղական եւ ազգային շրջանակներից անցում կատարելով տարածաշրջանային եւ համաշխարհային մասշտաբների:

3.2. ԱԴԵԿ-ն աջակցում է այն նպատակների եւ թիրախների իրագործմանը, որոնք ամրագրված են կայուն զարգացման նպատակներում, Կլիմայի վերաբերյալ Փարիզի համաձայնագրում, Աղետների ռիսկի նվազեցման՝ Սենդայի շրջանակային ծրագրում եւ ՄԱԿ-ի 2030 թվականի օրակարգի սկզբունքներում, որոնց համաձայն ոչ ոք, ոչ մի վայր եւ ոչ մի էկոհամակարգ չպետք է անտեսվի:

3.3. ԱԴԵԿ-ի առաքելությունն է աջակցել երկրներին՝ արդիականացնելու իրենց համակարգերը՝ բնական աղետների եւ կլիմայական փոփոխությունների նկատմամբ գոյություն ունեցող եւ ապագա ենթակառուցվածքի դիմակայունությունն ապահովելու համար: Այս գործընթացն ամբողջությամբ պետք է համապատասխանի կայուն զարգացման նպատակներին, Կլիմայի վերաբերյալ Փարիզի համաձայնագրին եւ Սենդայի շրջանակային ծրագրին: Կոալիցիան այդ առաքելությունն իրականացնում է՝

i) դիմակայուն ենթակառուցվածքային համակարգերի վերաբերյալ բոլոր մակարդակներում իրազեկությունը բարձրացնելու եւ դրան հասնելու նպատակով այլ համապատասխան նախաձեռնությունների հետ կապեր հաստատելու միջոցով,

ii) որպես աղետներին առնչվող տարբեր հարցերի եւ կլիմայի հանդեպ դիմակայուն ենթակառուցվածքի վերաբերյալ գիտելիքների ձեւավորման եւ փոխանակման հարթակ ծառայելու միջոցով,

iii) ազգային եւ տարածաշրջանային մակարդակում ենթակառուցվածքային համակարգերի պլանավորման, նախագծման, շահագործման եւ տեխնիկական սպասարկման համապատասխան ստանդարտները, օրենսդրությունը, մասնագրերը եւ ուղեցույցները կատարելագործելու միջոցով,

iv) աղետների եւ կլիմայի փոփոխության արդյունքում ենթակառուցվածքին հասցված վնասի եւ կորուստների եւ հիմնական ծառայությունների եւ տնտեսական ակտիվության խափանումների կրճատմանն ուղղված կարողությունները եւ գործելակերպը զարգացնելու միջոցով.

v) դիմակայուն ենթակառուցվածքային համակարգերի համար տեխնոլոգիական եւ ինստիտուցիոնալ նորարարությունների ապահովման միջոցով,

vi) տեխնիկական փորձաքննություն ապահովելու, այն է՝ երկրներին աղետների եւ կլիմայի հետ կապված իրենց ռիսկերին եւ ռեսուրսներին համապատասխան դիմակայուն ենթակառուցվածք զարգացնելուն աջակցելու միջոցով,

vii) ֆինանսական մեխանիզմներին, այդ թվում՝ դիմակայուն ենթակառուցվածքի զարգացմանը նպաստող ռիսկերի փոխանցման հնարավորություններին աջակցելու միջոցով, եւ

viii) երկրներին դիմակայուն ենթակառուցվածքի ռիսկերի կառավարման պատշաճ մեխանիզմներ եւ ռազմավարություններ որդեգրելու հարցում աջակցելու միջոցով:

3.4. ԱԴԵԿ-ի գործունեության իրականացման ընթացքում այն միշտ ղեկավարվում է հետեւյալ ուղղորդիչ սկզբունքներով.

i) *Ազգային եւ տեղական մակարդակում գործադրվող ջանքերի առաջնահերթության ճանաչում.* քանի որ երկրները ներդրումներ են կատարում շատ ոլորտների ենթակառուցվածքներում, ԱԴԵԿ-ը կխրախուսի կատարելագործված այնպիսի ստանդարտներ, օրենսգրքեր եւ կանոնակարգեր, որոնք հաշվի կառնեն ազգային եւ տեղական համատեքստը եւ առաջնահերթությունները:

ii) *Կենտրոնացում ամենախոցելի շրջանների եւ բնակչության վրա.* ելնելով իր առաքելությունից՝ ԱԴԵԿ-ն իր գործունեությունը պետք է ուղղի ամենախոցելի շրջանների բնակչության, այդ թվում՝ երեխաների, կանանց եւ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների բավարարմանը:

iii) *Երկրին բնորոշ եւ համաշխարհային միջոցառումների համադրում.* ԱԴԵԿ-ն իր աշխատանքները պետք է ուղղի երկրի կողմից սահմանված կոնկրետ խնդիրներին, ինչպես նաեւ ավելի լայն խնդիրների, այդ թվում՝ համաշխարհային եւ անդրսահմանային ենթակառուցվածքի դիմակայունությանը: Այն պետք է ցուցաբերի ճկուն մոտեցում եւ իր աշխատանքների ծավալները եւ շրջանակները համապատասխանեցնի իրեն ներկայացված պահանջներին:

iv) *Գործում է որպես գիտելիքների եւ փորձի փոխանակման կենտրոն.* ԱԴԵԿ-ը փաստաթղթավորում եւ համակարգում է աշխարհում գործող հետազոտական կենտրոնների, ակադեմիական շրջանակների եւ խորհրդատվական խմբերի գիտելիքները, փորձը, տեխնոլոգիական, ինստիտուցիոնալ եւ սոցիալական նորարարությունները՝ ենթակառուցվածքի դիմակայունությունը բարձրացնելու նպատակով: ԱԴԵԿ-ը պետք է համարվի դիմակայուն ենթակառուցվածքի ոլորտում գիտելիքների եւ փորձի փոխանակման համաշխարհային կենտրոն՝ իր գործունեությունն ուղղելով զարգացող երկրների կարիքներին:

v) *Աշխատում է համակողմանի ռիսկերի նվազեցման ուղղությամբ.* ԱԴԵԿ-ը նպաստում է ենթակառուցվածքային համակարգերում ռիսկերի նվազեցմանը եւ կլիմայի փոփոխության դեմ պայքարին բոլոր հարթություններում, այդ թվում՝ բնական աղետներից հետո իրականացվող գործողությունների իրականացմանը:

vi) *Ներառական եւ խորհրդատվական գործընթաց.* ԱԴԵԿ-ն իրականացնում է ներառական եւ խորհրդատվական գործընթացներ՝ տարբեր երկրների եւ շահագրգիռ կողմերի կողմից բարձրացված խնդիրները հասցեագրելու նպատակով:

### Հոդված 4

### *Կառավարման մեխանիզմները*

4.1. Քարտուղարության կառավարման մեխանիզմները ներառում են երեք հիմնական մարմին, մասնավորապես՝ ղեկավարների խորհուրդ, գործադիր կոմիտե եւ քարտուղարություն:

### Հոդված 5

### *Ղեկավարների խորհուրդը*

5.1. Ղեկավարների խորհուրդը ԱԴԵԿ-ի քաղաքականություն մշակող բարձրագույն մարմինն է: Այն կազմված է Կոալիցիայի բոլոր անդամներից:

5.2. Ղեկավարների խորհրդի անդամներն առաջադրվում են անդամ երկրների կառավարությունների, բազմակողմ կազմակերպությունների եւ այլ շահագրգիռ կողմերի կողմից այնպես, որ ղեկավարների խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը ներկայացնի ազգային կառավարությունները:

5.3. Ղեկավարների խորհրդի անդամները, որպես կանոն, ազգային կառավարությունների նախարարությունների/վարչությունների ղեկավարներ,

բազմակողմ կազմակերպությունների ղեկավարներ եւ այլ շահագրգիռ կողմերի կառույցների ղեկավարներ են:

5.4. Ղեկավարների խորհուրդը համանախագահում են երկու ազգային կառավարությունների ներկայացուցիչները:

5.5. Հնդկաստանը ղեկավարների խորհրդի մշտական համանախագահն է:

5.6. Մյուս համանախագահն առաջադրվում է ղեկավարների խորհրդի անդամների կողմից հաջորդաբար՝ երկու տարին մեկ:

5.7. Ղեկավարների խորհրդի կառավարման կառուցվածքը կարող է փոփոխվել ԱԴԵԿ-ի անդամության կազմի ընդլայնմանը զուգընթաց:

5.8. Ղեկավարների խորհուրդը, որպես կանոն, հանդիպում է տարին մեկ անգամ:

5.9. Ղեկավարների խորհուրդն իրականացնում է հետեւյալ հիմնական գործառույթները.

i) ապահովում է ԱԴԵԿ-ի աշխատանքների ընդհանուր ռազմավարական ուղղությունը,

ii) համարվում է քաղաքականություն մշակող մարմին եւ վերահսկում է ԱԴԵԿ-ի գործունեությունը,

iii) հաստատում է ԱԴԵԿ-ում նոր անդամների ընդգրկումը, ինչպես նաեւ կոնսենսուսի հիման վրա փոփոխություններ է կատարում սույն կանոնադրության մեջ,

iv) ղեկավարում է ԱԴԵԿ-ի՝ ռեսուրսների մոբիլիզացման ջանքերը եւ ապահովում է ֆինանսական ռեսուրսների համապատասխանությունն իրենց նպատակներին եւ մանդատին,

v) հաստատում է ԱԴԵԿ-ի աշխատանքային ծրագրերը, մարդկային ռեսուրսների պլանները եւ բյուջեն,

vii) նշանակում է ԱԴԵԿ-ի գործադիր կոմիտեի անդամներին,

viii) ապահովում է բարձր մակարդակի քարոզչություն՝ ԱԴԵԿ-ի օրակարգն առաջ մղելու համար,

ix) օգնում է ավելի բարձր մակարդակի կապեր հաստատել այլ համաշխարհային նախաձեռնությունների հետ, որոնք կարող են կապված լինել ԱԴԵԿ-ի գործունեության հետ:

## Հոդված 6

### *Գործադիր կոմիտեն*

6.1. Գործադիր կոմիտեն ԱԴԵԿ-ի կառավարման մարմինն է, որը վերահսկում է ղեկավարների խորհրդի որոշումների կատարումը: Գործադիր կոմիտեի անդամները տրամադրում են բազմաոլորտային գործառնական խորհրդատվություն ԱԴԵԿ-ի աշխատանքների առնչությամբ:

6.2. Գործադիր կոմիտեի անդամների ընդհանուր թիվը տասն է, որից ինն անդամ պատվիրակվում են մասնակից երկրների, բազմակողմ կազմակերպությունների եւ այլ շահագրգիռ կազմակերպությունների կողմից: ԱԴԵԿ-ի քարտուղարությունը ղեկավարող գլխավոր տնօրենը տասներորդ անդամն է:

6.3. Գործադիր կոմիտեն հաջորդաբար համանախագահում են երկու անդամներ՝ մինչեւ երկու տարի ժամկետով:

6.4. Գործադիր Կոմիտեն իրականացնում է հետեւյալ հիմնական գործառույթները.

i) ուղղորդում է քարտուղարությանը գործունեության հետ կապված բոլոր խնդիրների առնչությամբ,

ii) ապահովում է ռեսուրսների մոբիլիզացման եւ կառավարման, նախագծերի իրականացման, անձնակազմի հավաքագրման, գնումների եւ գործընկերների եւ շահագրգիռ կողմերի հետ համագործակցության գործընթացները,

iii) վերահսկում է քարտուղարության կողմից ԱԴԵԿ-ի աշխատանքային ծրագրի պատրաստման աշխատանքները,

iv) հաստատում է ԱԴԵԿ-ի բոլոր խոշոր նախագծերը եւ դրամաշնորհները,

v) պարբերաբար իրականացնում է արտաքին ֆինանսական աուդիտ եւ ԱԴԵԿ-ի արդյունքների գնահատում,

vi) կայացնում է որոշումներ՝ ԱԴԵԿ-ի քարտուղարության կողմից իրեն առաջադրված համապատասխան հարցերի վերաբերյալ:

6.5. Գործադիր կոմիտեն, որպես կանոն, հանդիպում է առնվազն տարին երկու անգամ:

**Հոդված 7**

***Քարտուղարությունը***

7.1. ԱԴԵԿ-ի քարտուղարությունը ղեկավարում է ղեկավարների խորհրդի կողմից նշանակված գլխավոր տնօրենը:

7.2. Քարտուղարության անձնակազմի թիվը հաստատում է ղեկավարների խորհուրդը՝ գործադիր կոմիտեի առաջարկությունների հիման վրա:

7.3. Քարտուղարության կառուցվածքը սահմանվում է պատշաճ կերպով՝ գլխավոր տնօրենի ղեկավարությամբ եւ գործադիր կոմիտեի ուղղորդմամբ եւ համաձայնությամբ՝ ռազմավարական աշխատանքային ծրագրի վերջնարդյունքներն ապահովելու նպատակով, այդ թվում՝ իրականացնելով հետեւյալ գործառույթները՝ տեխնիկական աջակցություն, կարողությունների

զարգացում, հետազոտությունների իրականացում, գիտելիքների կառավարում, քարոզչական գործունեության իրականացում, համագործակցություն, ինչպես նաեւ քարտուղարության գործառնությունների եւ կառավարման ապահովում:

7.4. Քարտուղարությունն իրականացնում է հետեւյալ գործառույթները.

i) աջակցում է ղեկավարների խորհրդի եւ գործադիր կոմիտեի գործունեությանը,

ii) մշակում եւ իրագործում է աշխատանքային ծրագիրը, բյուջեն, մարդկային ռեսուրսների պլանավորումը եւ ԱԴԵԿ-ի ռեսուրսների մոբիլիզացման պլանը,

iii) ձեւավորում է տեխնիկական աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ կամ փորձագիտական հանձնախմբեր՝ սահմանված ժամկետներում կոնկրետ խնդիրներին կամ նախագծերին արձագանքելու նպատակով,

iv) մշակում եւ իրականացնում է նախագծեր եւ դրամաշնորհային ծրագրեր,

v) աջակցում է արտաքին ֆինանսական աուդիտների եւ արդյունքների գնահատմանը,

vi) վարում է ԱԴԵԿ-ի բոլոր պաշտոնական թղթակցությունը, պատրաստում է փաստաթղթեր եւ հաշվետվություններ եւ անհրաժեշտության դեպքում աջակցություն է ցուցաբերում գործադիր կոմիտեին, եւ

vii) իրականացնում է ցանկացած այլ առաջադրանք, որն անհրաժեշտ է աջակցելու ԱԴԵԿ-ին իր առաքելությունն իրականացնելու նպատակով, ինչպես հանձնարարված է գործադիր կոմիտեի կողմից:

## Հոդված 8

### *Ֆինանսավորման մեխանիզմները*

8.1. Անդամ պետությունները, իրավական փաստաթղթերի հիման վրա, ուղղակիորեն կամ իրենց զարգացման գործակալությունների/մարմինների միջոցով կատարում են կամավոր ֆինանսական կամ բնաիրային ներդրումներ ԱԴԵԿ-ում, օրինակ՝ իրենց ազգային կառույցներից ԱԴԵԿ-ի քարտուղարությանը տրամադրում են փորձագետներ, անցկացնում են թեմատիկ աշխատաժողովներ եւ հանդիպումներ եւ փոխհատուցում են ճանապարհային ծախսեր:

8.2. ԱԴԵԿ-ի քարտուղարությունն ունի երկու հիմնադրամ՝ քարտուղարության հիմնադրամը եւ հավատարմագրային հիմնադրամը: Մասնակիցները կարող են ֆինանսական ներդրումներ կատարել հիմնադրամներից որեւէ մեկում կամ երկու հիմնադրամում:

8.3. Քարտուղարության հիմնադրամը հոգում է քարտուղարության հիմնական գործառնական ծախսերը: ԱԴԵԿ-ի քարտուղարությունը քարտուղարության հիմնադրամի համար մշակում է ֆինանսական կայունության ծրագիր:

8.4. Հավատարմագրային հիմնադրամը միջազգային եւ բազմաթիվ դոնորների մասնակցությամբ հավատարմագրային ֆոնդ է, որն օգտագործվում է ԱԴԵԿ-ի ծրագրերի ֆինանսավորման համար: Այն ղեկավարվում է քարտուղարության կողմից՝ գործադիր կոմիտեի անունից, եւ կառավարվում է հավատարմագրային ֆոնդի կառավարչի կողմից, որն ընտրվում է ՄԱԿ-ի եւ բազմակողմ համապատասխան գործակալությունների միջեւ անցկացված բաց մրցույթի միջոցով:

8.5. ԱԴԵԿ-ն ստեղծում է գործընկերային շրջանակ՝ տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ապահովելու համար: Գործընկերային շրջանակը ֆինանսավորվում է անդամների եւ այլ շահագրգիռ կողմերի կողմից արտաքին միջոցների հաշվին, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են հավաքագրվել քարտուղարության միջոցներից:

## Հոդված 9

## *ԱԴԵԿ-ի ծրագրերը*

9.1. *Տեխնիկական աջակցություն եւ կարողությունների զարգացում.* Այս ծրագիրն աջակցում է բազմաթիվ երկրների ներգրավվածությամբ նախագծերի մշակմանը, որն ուղղված է տեխնիկական աջակցության տրամադրմանը եւ ինստիտուցիոնալ նորարարության խթանմանը: Այն ներառում է կարողությունների զարգացման եւ ռիսկերի կառավարման եւ կայուն ենթակառուցվածքի ֆինանսավորման արդյունքների բարելավման միջոցառումներ: Դա հնարավոր է ապահովել ստանդարտների եւ հավատարմագրման մեխանիզմների մշակման եւ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան փորձագետներին տարբեր երկրներ եւ հաստատություններ գործուղելու միջոցով:

9.2. Հետազոտությունների եւ գիտելիքների կառավարում.

Այս ծրագիրն առաջին հերթին ուղղված է համատեղ հետազոտությունների եւ գիտելիքների համակարգերի խթանմանը, ինչը թույլ է տալիս ներդնել դիմակայուն ենթակառուցվածքի ապահովման ավելի արդյունավետ եղանակներ: Սա ներառում է համաշխարհային հրապարակումների եւ տարբեր տարածաշրջաններում ենթակառուցվածքի հիմնական ոլորտների դիմակայունության կարգավիճակի վերաբերյալ ընդհանուր տվյալների բազայի ստեղծման աջակցումը:

9.3. Քարոզչական գործունեություն եւ համագործակցություններ.

Այս ծրագիրը նպաստում է գիտելիքի եւ ծրագրի իրականացման գործընկերների միջեւ կապերի հաստատմանը: Այն հնարավորություն է տալիս տպագիր, հեռարձակվող եւ թվային լրատվամիջոցների միջոցով տարածել ԱԴԵԿ-ի անդամների կողմից ստեղծված տարբեր պրոդուկտներ, ինչպես նաեւ անցկացնել հերթական եւ ռազմավարական նշանակության աշխատաժողովներ: Այս ծրագիրը նաեւ թույլ է տալիս ԱԴԵԿ-ի գործառույթները համապատասխանեցնել համաշխարհային այլ նախաձեռնությունների հետ:

## Հոդված 10

***Կանոնադրության հասփափման ընթացակարգը***

10.1. Հիմնադիր անդամները, այդ թվում՝ անդամ երկրների կառավարությունները եւ մյուս շահագրգիռ կողմերը կարող են հաստատել սույն կանոնադրությունը՝ նամակ հղելով Հնդկաստանի կառավարությանը:

10.2. Ապագա անդամներն իրենց կողմից կանոնադրությունը հաստատելու մասին կարող են հայտնել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ղեկավարների խորհրդի համանախագահներին:

***